Կարգապահական գործ թիվ ԿԳ-15172

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի ապրիլի 18-ի թիվ 89-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/68-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սրադարյանի, Երվանդ Վարոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մանուշակ Հակոբյանին (արտոնագիր թիվ 737) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Քաղաքացի Սուլթան Դավթյանի (այսուհետ նաև՝ Դիմող) ներկայացուցիչ Սևակ Դավթյանը, 25.09.2015թ. դիմելով Պալատ, հայտնել է, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանը (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ թիվ ԵԱԴԴ/0279/02/13 քաղաքացիական գործով 16.03.2015թ., 16.04.2015թ. և 03.07.2015թ. դատական նիստերին ընդհանրապես չի ներկայացել, իր վարքագծի հետ կապված չի տվել ոչ մի բացատրություն, անհետք փոխել է գրասենյակի տեղը: Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանի կողմից գրված հայցադիմումը մերժվել է: Դիմողը մեջ է բերել թիվ ԵԱԴԴ/0279/02/13 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 03.07.2015թ. կայացված վճռի (այսուհետ՝ Վճիռ) հետևյալ պարբերությունները.

«...դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից դատարան չի ներկայացվել որևէ ապացույց, որն օրենքի իմաստով կարող էր գնահատվել որպես պահանջվող 1500 քմ. մակերեսով հողամասի նկատմամբ հայցվորի իրավունքները հաստատող փաստաթուղթ...:»:

«...Վերոգրյալի հիման վրա դատարանը հայցվորի պահանջը՝ 1.500 քմ հողամասի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը, համարում է անհիմն և մերժման ենթակա...:»:

«...Իսկ ինչ վերաբերում է հայցվորի՝ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Երևանի ստորաբաժանմանը պարտավորեցնել գրանցելու հայցվորի սեփականության իրավունքը պահանջին, ապա դատարանն արձանագրում է, որ հայցվորը չի հիմնավորել քաղաքացիական

դատավարության կարգով վարչական մարմնին գործողություն կատարելուն պարտավորեցնելու օրենսդրական հնարավորությունը,...:

«...Վերոգրյալի հիման վրա դատարանն արձանագրում է, որ նշված պահանջով ևս չկա վեճ, որը կարող է քննվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում...»:

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանն այնքան «որակյալ է» կատարել իր գործը, որ դիմել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան այնպիսի հայցով, որը չի կարող քննվել նույն դատարանի կողմից: Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Մանուշակ Գրիգորյանը չի պատասխանել հեռախոսազանգերին և փոխել է գրասենյակի տեղը: Ըստ Դիմողի՝ փաստաբանի կողմից իրենց գործն անբարեխիղճ և անհետևողական թողնելը հիմք է հանդիսանում նրանից հետ վերցնելու հոնորարի գոնե այն մասը, որի համար փաստաբանը փաստացի աշխատանք չի կատարել: Դիմելով Պալատ՝ Սևակ Դավթյանը խնդրել է փաստաբան Մանուշակ Հակոբյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառել և վերադարձնել իր կողմից ծառայություն մատուցելու համար փաստաբանին վճարված գումարը: Դիմումին կից ներկայացվել է «Գոլդեն Լեքս» ՍՊԸ և Սուլթան Դավթյանի միջև 19.02.2012թ. և «Գոլդեն Լեքս» ՍՊԸ և Սևակ Դավթյանի միջև 05.11.2012թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի, Սուլթան Դավթյանի կողմից Սևակ Դավթյանին նոտարական ձևով տրված լիազորագրի, թիվ ԵԱԴԴ/0279/02/13 քաղաքացիական գործով 03.04.2015թ. վճռի պատճենները, դատական նիստերի ձայնային կրիչը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 23.10.2015թ. թիվ 333-Ա/ԿԳ-15172 որոշմամբ փաստաբան Մանուշակ Հակոբյանի (արտոնագիր թիվ 737) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1, 3.6.3 և 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

27.10.2015թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Տիգրան Մուրադյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողի ներկայացուցիչը 22.12.2015թ. հայտնել է, որ Պատասխանողը քաղաքապետի 28.09.2012թ. որոշումը կարող էր բողոքարկել վարչական դատարան երկու ամսվա ընթացքում, նա ունեցել է 23 օր վարչական դատարան դիմելու համար, սակայն պայմանագիրը կնքելուց բաց է թողել այդ ժամկետը: Պատասխանողը, կադաստրում հարցում անելով, պարզել է, որ իրենց անունով գրանցումներ չկան, սակայն հայցադիմում նշել է, որ իրենք այդ գույքի սեփականտերերն են: Դատական նիստերը դատավորի կողմից հետաձգվել են, Պատասխանողին հնարավորություն տալով հստակեցնել հայցապահանջը, ինչը վերջինս չի կատարել: Պատասխանողը դատարան չի ներկայացրել նաև համայնքային իշխանությունների հետ կնքված օրինակելի պայմանագրերը և վճարումների անդորրագրերը: Պատասխանողը դատարան է ներկայացրել վճռաբեկ դատարանի որոշում, որտեղ վեճի առարկան և

բովանդակությունն այլ է և չի կարող նախադեպ հանդիսանալ: Նշել է նաև, որ փաստաբանը, ստանալով 100.000 ՀՀ դրամը, երեք հարցում է կատարել և գտել է, որ ունի համապատասխան ապացույցներ դատարան հայց ներկայացնելու համար: Արդյունքում ոչ մի ապացույց չի կարողանում ներկայացնել և հայցը մերժվում է

Խորհրդի նիստին Դիմողը ներկայացրել է և պնդել է գրավոր բացատրությունում նշված հանգամանքները: Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին՝ հայտնել է, որ իրենց միջև պայմանագիրը դադարել է մինչև մարտին նշանակված դատական նիստը: Հայտնել է նաև, որ ինքը բազմիցս բանավոր դիմել է «Գոլդեն Լեքս» ՍՊԸ-ին և Պատասխանողին իր կողմից վճարված գումարների վերադարձման համար, սակայն վերջիններս հրաժարվել են: Նշել է, որ իր կողմից վճարվել է 400.000 ՀՀ դրամ և այն ամբողջությամբ պետք է վերադարձվի իրեն:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը 19.12.2015թ. ներկայացրել է Տեղեկանք թիվ ԵԱԴԴ/0279/02/13, որտեղ մասնավորապես նշել է, որ Սևակ Դավթյանը իր նախկին վստահորդ Սուլթան Դավթյանի թոռնիկն է: Սևակ Դավթյանը, հանդիսանալով ճարտարագիտական համալսարանի ուսանող, ընդհանուր ծանոթ դասախոսի միջոցով դիմել է իրենց ընկերություն իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար: Ուսումնասիրելով նրա կողմից ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվել է կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր: 05.11.2012թ.-ին Սևակ Դավթյանի հետ կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Նա վճարել է հարյուր հազար ՀՀ դրամ, որի առարկան էր հանդիսանում ձեռք բերել 2008 թվականին Սուլթան Դավթյանի դիմումի հիման վրա Երևան քաղաքի Լուկաշինի 3-րդ փողոցին հարող հողամասի օրինականացման վերաբերյալ կազմված գործի փաստաթղթերը, քանի որ ըստ Սուլթան Դավթյանի հայտարարության այդ դիմումների արդյունքում կայացվել է որոշում Սուլթան Դավթյանի կողմից՝ որպես զոհված ազատամարտիկի հոր, բնակելի տան ինքնակամ շինությունը և հարող 1500քմ. մակերեսով հողակտորն օրինականացնելու մասին: 19.11.2012թ.-ին փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո գրություն է կազմվել Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին: 11.12.2012թ. ավելի պարզեցված և հստակեցված դիմում-գրություն է կազմվել 2008թ. թիվ Դ-24 և Դ25 դիմումների գործի վերջնական ընթացքի վերաբերյալ: 08.01.2013թ. կազմվել է երրորդ գրությունը կից փաստաթղթերով և հիմնավորումներով: Այդ հարցումներին և գրություններին ի պատասխան Երևանի քաղաքապետարանից 04.12.2012թ., 20.12.2012թ. և 06.02.2013թ. ստացվել են պատասխաններ, որոնք ըստ էության չէին պարունակում տեղեկություններ Պատասխանողի կողմից արված հարցումներում արծարծված փաստերի վերաբերյալ: 2012թ. Սևակ Դավթյանի հետ Պատասխանողն այցելել է Երևանի քաղաքապետարան, հանդիպել ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանի և մասնագետ Կարեն Կարապետյանի հետ: Այդ այցելությունից և իր գրությունների պատասխաններից պարզ դարձավ, որ Սուլթան Դավթյանին անհրաժեշտ դիմումների և դրանց կապակցությամբ կազմված գործերի փաստաթղթերը չեն տրամադրվելու: Նշված պայմանագրի գործողությունն ավարտվել է: Սևակ Դավթյանը 19.02.2013թ-ին Սուլթան Դավթյանի հետ կնքված պայմանագրի կողմ չի հանդիսանում: Քանի որ Սուլթան Դավթյանը մեծահասակ մարդ է, զոհված ազատամարտիկի հայր, Պատասխանողը հանդիպել է նրան և խորհրդատվության կարգով բացատրել ստեղծված իրավիճակը, պարզաբանել, որ նրա կողմից բաց է թողնվել վարչական դատարան դիմելու

պարտավորեցման հայցի համար օրենքով սահմանված ժամկետը և առաջարկել է օրենքով սահմանված մեկ այլ տարբերակ, ըստ ձեռք բերված ապացույցների և ըստ Սևակ Դավթյանի մատնանշված հանգամանքների 2008թ. դիմումի կապակցությամբ, դատական կարգով վեճը լուծելու համար: Պատասխանողը նշել է, որ ըստ իրենց կողմից ներկայացված հանգամանքների 2008 թվականի դիմումների ընթացքի վերաբերյալ իրենց նույնիսկ առաջարկվել է սեփականաշնորհվող տարածքի ճշգրտված տեղագրական հանույթը, սահմանանիշների տեղադրմամբ: Իրենք վճարել են նաև այդ հանույթը պատվիրելու համար, որից հետո եղել է նաև օրինականացման որոշում, որն իրենց այդպես էլ չի տրամադրվել: Նման որոշման առկայության պայմաններում ինքնակամ շինությունը և հողամասը համարվում են օրինական: Պատասխանողը նշել է, որ պարզաբանել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի դրույթները, բացատրել է, որ դատական կարգով հնարավոր է ներկայացնել հիմնավորված միջնորդություն և քաղաքապետարանից ստանալ բոլոր ապացույցները: Իր անձնական գրադարանից ուսումնասիրել և պարզաբանել է 2006թ. թիվ 06-2308 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, 2005 թվականի մարտի 3-ի թիվ 04-2774 որոշումը: Բացատրել է նաև, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը: Սուլթան Դավթյանը համաձայնվել է և իրենց միջև 2013 թվականի փետրվարի 19-ին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր հայցը նախապատրաստելու և դատարան ներկայացնելու համար: Պայմանագրում նշված է առաջին փուլի վարձատրության չափը և նշված է նաև, որ հետագայում լրացուցիչ վարձատրության պայմանավորվածություն կարող է առաջանալ: Առաջին վարույթը, ըստ պայմանավորվածության վերաբերել է մինչև գործի դատաքննությունը սկսելուն: Հետո Պատասխանողն անընդհատ հիշեցրել է լրացուցիչ վարձատրության մասին: Կազմվել է հայցադիմում և ներկայացվել դատարան Սուլթան Դավթյանի սեփականության իրավունքը ճանաչելու և ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում գրանցելու պարտավորեցնելու մասին, կից փաստաթղթերի հետ միասին: 2013թ. մարտի 18-ին հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննություն 05.04.2013 թվականին: Այդ նիստին մասնակցել է Պատասխանողը և հիմնավորված միջնորդություն ներկայացրել ապացույց պահանջելու մասին: Դատարանը բավարարել է միջնորդությունը և տվել կատարողական թերթ ԴԱՀԿ ծառայություն ներկայացնելու համար: ԴԱՀԿ ծառայությունում հարուցվել է կատարողական վարույթ դատարանի որոշման պահանջը կատարելու համար: Հաջորդ 23.04.2013թ. նիստին ինքը ևս մասնակցել է: 29.04.2013թ. նիստը չի կայացել դատավորի փոփոխության պատճառով: 17.05.2013թ. դատավոր Աթաբեկյանն ընդունել է վարույթ: 04.06.2013թ., 19.06.2013թ., 18.07.2013թ., 04.07.2014թ., 28.04.2014թ. նիստերին ինքը մասնակցել է: 20.08.2013թ. գտնվել է արձակուրդում, 21.11.2013թ. տեղի է ունեցել դատավորի փոփոխություն: 26.11.2013թ. Մխիթարյանն ընդունել է վարույթ: 31.01.2014թ. նշանակված նիստը չի կայացել դատավորի վատառողջ լինելու պատճառով: 31.03.2014թ. նշանակված նիստին ինքը չի մասնակցել, 25.09.2014թ. դատավորը մասնակցել է սեմինարին: Բոլոր դատավորների վարույթ ընդունելու ընթացքում հարկադիր կատարման ծառայությունը գրություն է ուղարկել դատավորներին՝ տեղյակ պահելով պահանջված և քաղաքապետարանից ուղարկված ապացույցների վերաբերյալ՝ 12.06.2013թ. ուղղվել է Աթաբեկյան անվամբ, 14.08.2013թ. ուղարկվել է Ավետիսյանի անվամբ, սակայն Ավետիսյանը վերադարձել էր

գործուղումից և այն հանձնվել է Աթաբեկյանին: 2015թ. հուլիսի 9-ին ԴԱՀԿ-ից գրություն է ուղարկվել Մխիթարյանին՝ խնդրելով պարզաբանում տալ ուղարկված ապացույցների բավարար լինելու մասին: ԴԱՀԿ ծառայության պահանջով քաղաքապետարանից ներկայացվել են Սուլթան Դավթյանի կողմից մատնանշված 2008 թվականի դիմումների դրանց պատասխանների ոչ ամբողջական փաթեթը: 17.12.2014թ. ևս ներկայացվել է գրություն, խնդրելով պարզաբանել դատարանին, արդյոք բավարարում են ներկայացված ապացույցները 05.04.2013թ. դատարանի որոշման պահանջներին և վերջին երկու գրությունները դատարանի կողմից թողնվել են անհետևանք և փոխանակ հետամուտ լինելու դատարանի որոշման կատարմանը կայացվել է վճիռ, դատարանի որոշումն ապացույց պահանջելու մասին թողնելով անկատար և առանց իրավական գնահատական տալու: Դատական նիստերին զուգահեռ հետևողական աշխատանք է արվել ԴԱՀԿ ծառայության աշխատակից Գևորգ Տեր-Ղազարյանի հետ կազմվել են թվով մի քանի գրություններ, կատարողական վարույթը չկարճելու և ճիշտ ապացույցները քաղաքապետարանից պահանջելու վերաբերյալ: Մի քանի անգամ Սևակ Դավթյանի հետ Պատասխանողն այցելել է ԴԱՀԿ ծառայություն և ծանոթացել վարույթի նյութերին: Նմանօրինակ միջնորդություն 04.06.2014թ.-ին ներկայացվել է նաև դատավոր Ա. Մխիթարյանին: Իր մասնակցության ընթացքում ԴԱՀԿ ծառայությունում կազմվել էր Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստարաբաժանմանը տուգանելու վերաբերյալ որոշման նախագիծ, քանի որ դատարանի կողմից պահանջվող ապացույցները առանց պատճառաբանության կամ ոչնչացված լինելու հետևանքով այդպես էլ չեն ներկայացվել դատարան: 2015 թվականի հունվարի 26-ին, իր ծննդյան օրը, մասնակցել է դատական նիստին՝ գտնելով, որ շատ կարևոր է, և պնդել է իր կողմից ներկայացված միջնորդությունը, պարզաբանելով, որ ապացույց պահանջելու որոշումը կատարված չի, ԴԱՀԿ ծառայությունը, չնայած քաղաքապետարանի բազմաթիվ գրությունների չի կարճել հարուցված վարույթը, քանի որ քաղաքապետարանից ներկայացված ապացույցներն ամբողջական չեն: Այդ նիստից հետո իրենք հանդիպել ենք, Պատասխանողն առաջարկել է մինչև հաջորդ նիստը, որը պետք է տեղի ունենար 2015 թվականի մարտի 16-ին, լուծել պայմանագրով նախատեսված լրացուցիչ վարձատրության հարցը: Սևակ Դավթյանն իրեն ասել է, որ դատարանից խորհուրդ են տվել փոխել փաստաբանին, պապը՝ Սուլթան Դավթյանը, արդեն վարձել է ուրիշ փաստաբան, նրա հետ պայմանավորվածություն ունի, կնքել է նոր պայմանագիր, չի ցանկանում այլևս շարունակել 2012 թվականի նոյեմբերին կնքված պայմանագիրը և ամռան ամիսներին Հայաստանից բացակայելու է: Քանի որ պայմանագրի գործողության ժամկետ սահմանված չի եղել, Սուլթան Դավթյանը և Սևակ Դավթյանն իրենց գործողություններով ակնհայտ հրաժարվել են կնքված պայմանագրից, չցանկանալով լրացուցիչ վարձատրության համար պայմանավորվել, իրեն տեղյակ են պահել և կնքել են պայմանագիր այլ փաստաբանի հետ: Պատասխանողը նշել է, որ 16.03.2015թ. գնացել է դատարան, համոզվելու համար, որ այլ փաստաբան է մասնակցում և նիստի չմտնելով՝ վերադարձել է: Գործով նոր փաստաբան Արմեն Ումրշատյանը մոլորեցրել է քաղաքացուն, անտեսելով այն հանգամանքը, որ դատարանի ապացույց պահանջելու մասին որոշման պահանջները դեռևս կատարված չեն, հետևողական չի գտնվել, մտել է սկսված վարույթի մեջ շատ պատասխանատու պահին, ձախողել հայցը, Դավթյաններին լարել Պատասխանողի դեմ և 2015 թվականի մայիսի 5-ին զանգել ու պահանջել նրանց կողմից վաճարված ծառայության վարձը: Նա նույնիսկ վերաքննիչ բողոք չի բերել, քանի որ դատարանը թույլ է տվել դատավարական խախտում, դատարանի կողմից ապացույց պահանջելու մասին որոշման պահանջները մնացել են չկատարված, դատարանը

հետամուտ չի եղել և իրավական գնահատական չի տվել այդ հանգամանքին: Այն դեպքում, երբ Պատասխանողն երկու տարի շարունակ պայքարել է արդեն բավական փաստաթղթեր ստացվել էր և քիչ էր մնում վերջնական որոշումը ստանային, Ումրշատյանը մտնում է գործի մեջ և տանում դեպի փակուղի: Պատասխանողը նշել է, որ պայմանագրի գործողության ընթացքում ինքը պատասխանել է հեռախոսազանգերին նույնիսկ պայմանագիրը լուծելուց հետո, իրենք հեռախոսով խոսել են և հանդիպել: Ինքը հեռախոսով խոսել է նաև նրանց նոր փաստաբան Արմեն Ումրշատյանի հետ: Նա զանգահարել և գումար էր հետ պահանջում: Նշել է, որ ունի 091 56 31 55 համարի /նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար մարտ, մայիս/և 091 41 92 99 համարի /մայիս ամսվա/ հեռախոսային խոսակցությունների վերծանումները, սակայն վիվա-սել-ինը չունեմ, քանի որ նրանք մուտքային զանգերը չեն տրամադրում: Հայտնել է, որ հեռախոսահամարները չի փոխել, դրանք օգտագործում է 2012 թվականից մինչ օրս: Չի փոխել նաև իր գրասենյակի տեղը, բոլոր ծանուցագրերը ստացվել են Դավթյանին և դատարանին հայտնի հասցեով: Պատասխանողը նշել է նաև, որ դիմել է, նաև ԴԱՀԿ ծառայություն կատարողական վարույթի նյութերի պատճենները ստանալու խնդրանքով, սակայն դեռևս դրանք իրեն չեն տրամադրվել: Դրանք կներկայացնի լրացուցիչ, ստանալուց անմիջապես հետո:

Տեղեկանքին կից Պատասխանողը ներկայացրել է հետևյալ փաստաթղթերի պատճենները.

քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին 26.11.2013թ. որոշում, հայցադիմումը վարույթ ընդունելու և քննություն նշանակելու մասին 18.03.2013թ. որոշում, քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին 17.05.2013թ. որոշում, 05.14.2013թ., 23.04.2013թ., 19.06.2013թ., 18.07.2013թ., 14.08.2013թ., 20.08.2013թ., 30.08.2013թ., 31.03.2014թ., 04.07.2014թ., 25.11.2014թ., 26.01.2015թ., 16.03.2015թ., 16.04.2015թ., 18.06.2015թ. տեղի ունեցած դատական նիստերի արձանագրման համառոտագրումներ, 08.10.2013թ. տեղի ունեցած դատական նիստի արձանագրություն, 28.04.2014թ. տեղի ունեցած նախնական դատական նիստի արձանագրություն, 05.04.2013թ. ներկայացրած միջնորդություն (ապացույց պահանջելու մասին), 05.04.2013թ. կատարողական թերթ (գործ թիվ ԵԱԴԴ/0279/02/13) Երևանի քաղաքապետարանից նյութեր պահանջելու մասին, համայնքի ղեկավարի 28.06.2008թ. գրություն ուղղված ՍուլթանԴավթյանի, հողի հանձման ակտ, Օրինակելի պայմանագիր 13, Սուլթան Դավթյանից 12.03.2008թ. ներկայացված դիմում (թվով երկու հատ), Երևանի քաղաքապետ՝ Ե.Զախարյանին ուղղված 09.04.2008թ. գրություն, ՀՀ Երևան ք. Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 03.07.2013թ. գրություն, Հողամասի հատակագիծ, Երևան քաղաքի/համայնքի/սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցի մասին 03.10.2012թ. մասնագիտական եզրակացություն, Երևանի քաղաքապետի 18.10.2012թ. որոշում /ինքնակամ կառույցի օրինականացման մասին/, Երևանի քաղաքապետարանի 16.07.2013թ. գրություն, Երևանի քաղաքապետարանի 01.08.2013թ. գրություն, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան ք. Աջափնյակ և Դավթաշենի բաժնի 14.08.2013թ. գրություն, Երևանի քաղաքպետարանի 16.07.2013թ. գրություն՝ կից փաստաթղթերով, Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդականի 25.04.2013թ. գրություն՝ կից փաստաթղթերով, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան ք. Աջափնյակ և Դավթաշենի բաժնի 09.04.2015թ. N ԵԳ5569/06 գրություն, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության

11.12.2014թ. գրություն, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան ք. Աջափնյակ և Դավթաշենի բաժնի 14.08.2013թ. N ԵԳ11686/06 գրություն, Երևանի քաղաքապետարանի 12.06.2013թ. գրություն, Երևանի քաղաքապետարանի 01.08.2013թ. գրություն, Հատակագծեր, ՀՀ Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարի 23.06.2008թ. գրություն, Երևանի քաղաքապետարանի 16.06.2008թ. գրություն, ՀՀ Երևան ք. Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 03.07.2013թ. գրություն, 04.06.2014թ. միջնորդություն Ս. Դավթյանից՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը պարտավորեցնել կատարելու դատարանի որոշման պահանջները, Արմեն Ումրշատյանի կողմից Աջափնյակ և Դավթաշեն շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացված միջնորդություն քաղգործով հայցվորի ներկայացուցիչ ներգրավվելու և գործի նյութերին ծանոթանալու մասին (կից արտոնագրի պատճեն, 26.02.2015թ. տրված լիազորագիր), ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 17.11.2004թ. վճիռ, ՀՀ վճռաբեկ դատարանի 03.03.2005թ. որոշում, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. որոշում, քաղաքացիական գործը դատաքննության նշանակելու մասին 16.04.2015թ. որոշում, «Գոլդեն Լեքս» ՍՊԸ 07.12.2015թ. տեղեկանք (կից հեռախոսահամարների տեղեկանքներով):

Խորհրդի նիստում Պատասխանողը ներկայացրել է և պնդել է գրավոր բացատրությունում նշված հանգամանքները: Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին՝ հայտնել է, որ կնքված պայմանագիրը դադարել է հունվարին նշանակված դատական նիստից հետո: Հայտնել է, որ իր կողմից ծառայությունները մատուցվել են բարեխճորեն, ինքը հայցադիմումում ներկայացրել է ճիշտ պահանջ, հայցադիմումը ներկայացվել է այն դատարանին, որն իրավասու էր քննել այն: Նշել է նաև, որ իր կողմից դատարան ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով հիմնավորվում է, որ վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

22.12.2015թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, գտել է, քանի որ դատարանի կողմից արագացված դատաքննության կարգ չի կիրառվել, գործի քննությունն իրականացվել է դատաքննության նախապատրաստության փուլով, նշվածը վկայում է այն մասին, որ դատարանի գնահատմամբ հայցն ակնհայտ անհիմն չի եղել: Նախապատրաստողը նշել է նաև, որ գործի փաստերի համաձայն ինքնակամ կառույցն եղել է 1500քմ հողամասի սահմաններից դուրս գտնվող այլ հողամասի վրա: Ինչպես նշված է թիվ ԵԱԴԴ/0279/02/13 վճռում ինքնակամ կառույցը Երևանի քաղաքապետի 18.10.2012թ. որոշմամբ համարվել է Երևան քաղաքի սեփականությունը և ճանաչվել է օրինական: Նույն որոշմամբ այն գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու առաջարկ է կատարվել Սուլթան Դավթյանին: Նախապատրաստողը գտել է,

որ նշվածից հետևում է, որ ինքնակամ կառույցի մասով վեճը լուծված է եղել: Ըստ նախապատրաստողի խնդրո առարկա է հանդիսացել 1500քմ հողամասը, որի օրինականացման վերաբերյալ 2008թ. Սուլթան Դավթյանը դիմել է Երևանի քաղաքապետարան, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին, անշարժ գույքի կադաստր վարող մարմնին: Քաղաքապետարանը հողամասի օրինականցման համար պահանջել է տարածքի ճշգրտված տեղագրական հանույթը, որը ներկայացնելով, Սուլթան Դավթյանը խնդրել է օրինականացնել հողամասը, սակայն պատասխան չի ստացել: Հիմք ընդունելով, որ օրենքի ուժով վարչական ակտ չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված և դիմողը կարող է ձեռնմուխ լինել համապատասխան իրավունքների իրականացմանը, հայցադիմումով պահանջվել է այդ հողամասի նկատմամբ ճանաչել Դիմողի սեփականության իրավունքը: 16.03.2015թ., 16.04.2015թ. և 03.07.2015թ. դատական նիստերին Պատասխանողը չի ներկայացել, քանի որ Պատասխանողի վստահորդը դիմել է այլ փաստաբանի և հրաժարվել իր ծառայություններից: Ներկայացված դատական նիստի արձանագրության համառոտագրից երևում է, որ 26.01.2015թ. դատական նիստը հետաձգվել է դատարանի կողմից ապացույց պահանջելու մասին որոշման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու համար, իսկ հետագայում հայցվոր կողմի նոր փաստաբանը չի անդրադարձել դատարանի այդ որոշմանը, այն կատարված չլինելու հանգամանքին և համաձայնվել է անցնել դատաքննության: Մինչդեռ այդ ապացույցը կարող էր էական նշանակություն ունենալ գործի լուծման համար, ինչի մասին նաև նշել է Դիմողի ներկայացուցիչը իր 04.06.2014թ. միջնորդությամբ: Ըստ նախապատրաստողի Պատասխանողը ստացված հոնորարի դիմաց մատուցել է պայմանագրով նախատեսված ծառայությունները: Նախապատարստողը նշել է նաև, որ հաշվի առնելով այն փաստը, որ Դիմողը հրաժարվել է Պատասխանողի ծառայությունից և դիմել այլ փաստաբանի, Պատասխանողի կողմից հեռախոսազանգերին չպատասխանելու, գործունեության հասցեն փոխելու մասին ողջամիտ ժամկետում Դիմողին չտեղեկացնելու համար չէր կարող վրա հասնել Կանոնագրքով նախատեսված խախտումը: Նախապատրաստողը գտել է, որ Պատասխանողի կողմից թույլ չի տրվել Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1, 3.6.3 և 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտում:

29.12.2015թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի փետրվարի 17-ին, ժամը՝ 19:45-ին, 2016 թվականի փետրվարի 29-ին, ժամը՝ 18:30-ին, 2016 թվականի մարտի 30-ին, ժամը՝ 18:30-ին, 2016 թվականի ապրիլի 18-ին, ժամը՝ 18:40-ին,ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) «Գոլդեն Լեքս» ՍՊԸ և Սևակ Դավթյանի միջև 05.11.2012թ. կնքվել

փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր, որի համաձայն փաստաբանը պետք է կատարեր հարցումներ: Նշված ծառայությունների դիմաց Սևակ Դավթյանը պետք է վճարեր 100.000 ՀՀ դրամ համար (հաստատվում է «Գոլդեն Լեքս» ՍՊԸ և Սևակ Դավթյանի միջև 05.11.2012թ. կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագրի պատճենով):

2) «Գոլդեն Լեքս» ՍՊԸ և Սուլթան Դավթյանի միջև 19.02.2013թ.(պայմանագրում նշված է 2012թ., որն ըստ Կողմերի վրիպակ է) կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր, որի համաձայն փաստաբանը պետք է կատարեր փաստաթղթերի ուսումնասիրություն, հայցի նախապատրաստում, դատական ներկայացուցչություն: Նշված ծառայությունների դիմաց առաջին փուլի համար Սուլթան Դավթյանը պետք է վճարեր 200.000 ՀՀ դրամ: Հետագայում կողմերը կպայմանավորվեն լրացուցիչ (հաստատվում է «Գոլդեն Լեքս» ՍՊԸ և Սուլթան Դավթյանի միջև 19.02.2013թ. կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագրի պատճենով):

3) 05.11.2012թ. կնքված պայմանագրի շրջանակներում գրություն է կազմվել Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին: 11.12.2012թ. դիմում-գրություն է կազմվել 2008թ. թիվ Դ-24 և Դ25 դիմումների գործի վերջնական ընթացքի վերաբերյալ: 08.01.2013թ. կազմվել է երրորդ գրությունը Այդ հարցումներին և գրություններին ի պատասխան Երևանի քաղաքապետարանից 04.12.2012թ., 20.12.2012թ. և 06.02.2013թ. ստացվել են պատասխաններ (հաստատվում է Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով, հարցումների և պատասխանների պատճեններով):

4) 18.10.2012թ. Երևանի քաղաքապետի որոշմամբ Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող, Երևանի Լուկաշինի 3-րդ փողոց, հ 17/1 հասցեում գտնվող 674,25քմ ընդհանուր մակերեսով հողամասում կառուցված՝ կիսակառույց բնակելի տուն, գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը համարվել է Երևան քաղաքի սեփականությունը և այն ճանաչվել է օրինական: Որոշման 2-րդ կետի համաձայն նշված կառույցը և հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու առաջարկ պետք է կատարել կառույցն իրականացրած անձ՝ Սուլթան Գվիտոնի Դավթյանին (հաստատվում է 18.10.2012թ. Երևանի քաղաքապետի որոշման պատճենով):

5) Պատասխանողի կողմից հայց է ներկայացվել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան հետևյալ պահանջով՝ Լուկաշինի 3-րդ փողոցին հարող տարածքում Սուլթան Գվիտոնի Դավթյանի կողմից կառուցված ինքնակամ շինության և 1.500 քմ հողամասի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը և ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Երևանի ստորաբաժանմանը պարտավորեցնել գրանցելու այն (հաստատվում է Պատասխանողի կողմից տրամադրված հայցադիմումի օրինակով, Դիմողի կողմից ներկայացված վճռի պատճենով, Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով):

6) 05.11.2012թ. կնքված պայմանագիրը լուծվել է 19.02.2013թ. պայմանագրի կնքմամբ, իսկ 19.02.2013թ. կնքված պայմանագիրը լուծվել է 26.01.2015թ. նշանակված դատական նիստից հետո՝ մինչև 16.03.2015թ. նշանակված դատական նիստը (հաստատվում է Դիմողի ներկայացրած դիմումով, Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով):

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 15.02.2016թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/146-16 տեղեկանքի համաձայն Մանուշակ Հակոբյանը արտոնագիրը ստացել է 19.10.2007թ.: Մանուշակ Հակոբյանի նկատմամբ 2007-2016թթ ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 23.10.2015թ. թիվ 333-Ա/ԿԳ-15172 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանին «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 ենթակետի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, իսկ փաստաբան Մանուշակ Հակոբյանի նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.6.1, 3.6.3, 3.8.5, 3.1.8, 3.5.5 ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

ա) Փաստաբան Մանուշակ Հակոբյանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու և հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելու վերաբերյալ.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում: Այսինքն, իրավունքի համապատասխան ճյուղի չիմացությունը, վստահորդի հանձնարարությանը վերաբերող հանգամանքների թերի ուսումնասիրությունը, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ չկատարելը հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս կանոնի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը չգիտեր իրավունքի համապատասխան ճյուղը, թերի էր ուսումնասիրել կամ չէր ուսումնասիրել վստահորդի հանձնարարությանը վերաբերող հանգամանքները, չէր կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետը սահմանում է, որ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը: Այսինքն, զբաղվածության կամ որևէ այլ պատճառով հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովվելը հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս կանոնի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը չի ապահովվել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը՝ զբաղվածության կամ որևէ այլ պատճառով:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից: Այսինքն, ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ չտալը և իր վստահորդին չպաշտպանելը և նրա անունից հանդես չգալը հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս կանոնի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ չի տվել և չի պաշտպանել իր վստահորդին և հանդես չի եկել նրա անունից:

Դիմողը շեշտադրել է այն, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանը դիմել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան այնպիսի հայցով, որը չի կարող քննվել նույն դատարանի կողմից:

Պատասխանողի կողմից հայց է ներկայացվել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան հետևյալ պահանջով՝ Լուկաշինի 3-րդ փողոցին հարող տարածքում Սուլթան Գվիտոնի Դավթյանի կողմից կառուցված ինքնակամ շինության և 1.500 քմ հողամասի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը և ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Երևանի ստորաբաժանմանը պարտավորեցնել գրանցելու այն: Խորհրդի նիստում Պատասխանողը հայտնել է, որ ինքը հայցադիմումում ներկայացրել է ճիշտ պահանջ, հայցադիմումը ներկայացվել է այն դատարան, որն իրավասու էր քննել այն: Մինչդեռ, Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է դատական կարգով ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջին՝ նշելով ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման իրավական հիմքը բացակայում է և ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասով վեճը ենթակա չէ դատարանում քննության: Պատասխանողը նշել է նաև, որ իր կողմից դատարան ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով հիմնավորվում է, որ վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը: Մինչդեռ, Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողի կողմից դատարան ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում նշված է, որ ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման իրավական հիմքը բացակայում է ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասով վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Այսինքն, Պատասխանողի կողմից ներկայացվել է այնպիսի պահանջ, որն ենթակա չէր դատարանում քննության: Ավելին, Պատասխանողի կողմից դատարան ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով ոչ թե հիմնավորվում է հայցապահանջը, այլ ընդհակառակը: Նշվածի հիման վրա, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը չի ունեցել իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,

մասնավորապես՝ չգիտեր, որ ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասով վեճը ենթակա չէ դատարանում քննությանը:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտում:

Ինչ վերաբերում է Պատասխանողի կողմից Կանոնագքրի 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտում թույլ տալուն, ապա Խորհուրդը գտնում է կարգապահական գործի քննության ընթացքում չի ներկայացվել այնպիսի ապացույց, որով կհիմնավորվեր, որ՝

- Պատասխանողը չի ապահովվել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը՝ զբաղվածության կամ որևէ այլ պատճառով:
- Պատասխանողը ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ չի տվել և չի պաշտպանել իր վստահորդին և հանդես չի եկել նրա անունից:

Կարգապահական գործի քննության ընթացքում ներկայացված փաստաթղթերից երևում է, որ Պատասխանողը մասնակցել է դատական նիստերին, հանդես է եկել իր վստահորդի անունից, իր կողմից ներկայացված հայցադիմումի շրջանակներում պահանջել է ապացույցներ: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից թույլ չի տրվել Կանոնագրքի 3.6.3 ենթակետի խախտում:

բ) Փաստաբան Մանուշակ Հակոբյանի կողմից փաստացի չկատարած աշխատանքի մասով ստացած հոնորարը չվերադարձնելու վերաբերյալ.

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Այսինքն, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա պայմանագրով ստացած հոնորարի այն մասը չվերադարձնելը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս կանոնի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը ստացած հոնորարի դիմաց փաստացի աշխատանք կատարել է, թե ոչ,

արդյո՞ք Պատասխանողի հետ կնքված պայմանագրերում հոնորարի վերադարձման վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված է:

Դիմողը ներկայացրել է «Գոլդեն Լեքս» ՍՊԸ հետ կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման երկու պայմանագրերի պատճեններ: 19.02.2012թ. պայմանագրի համաձայն ծառայության վճարը առաջին փուլի համար կազմում է 200.000 ՀՀ դրամ, իսկ 05.11.2012թ. պայմանագրով 100.000 ՀՀ դրամ: Նշված պայմանագրերով հոնորարի վերադարձման վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չէ:

Ըստ Դիմողի՝ փաստաբանի կողմից իրենց գործը թողնվել է անբարեխիղճ և անհետևողական, ինչը հիմք է հանդիսանում նրանից հոնորարի գոնե այն մասը հետ վերցնելու համար, որի համար փաստաբանը փաստացի աշխատանք չի կատարել:

Պալատի խորհուրդը գտնում է, որ ներկայացված ապացույցներով հնարավոր չէ պարզել Պատասխանողի մատուցած կոնկրետ ծառայությունների ծավալը, որպիսի

պարագայում հնարավոր չէ Պատասխանողին վերագրել Կանոնագրքի 3.8.5 ենթակետի խախտում: Պալատի խորհուրդն արձանագրում է, որ հոնորարի վերադարձման հարցով Դիմողը կարող է իր իրավունքի պաշտպանությունն իրականացնել դատական կարգով:

գ) Փաստաբան Մանուշակ Հակոբյանի կողմից Դիմողի հեռախոսազանգերին չպատասխանելու, իր գործունեության հասցեն փոխելու և այդ մասին Դիմողին չտեղեկացնելու վերաբերյալ.

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին: Այսինքն, վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես չտեղեկացնելը և նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելը հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս կանոնի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը վստահորդին՝ հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես չի տեղեկացրել և նրան հետաքրքրող հարցերին չի պատասխանել:

Դիմողը, պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին, հայտնել է, որ Պատասխանողն իր զանգերին չի պատասխանել 2015թ. մարտի 16-ից հետո, այսինքն՝ այն ժամանակ, երբ ծառայությունների մատուցման պայմանագիրը փաստացի դադարել է: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից թույլ չի տրվել Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտում:

Կանոնագրքի 3.6.3 ենթակետի համաձայն՝ իր գործունեության հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու դեպքում, փաստաբանը պարտավոր է վստահորդներին, ինչպես նաև Պալատին, ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր հասցեի կամ հեռախոսահամարի մասին:

Այսինքն, իր գործունեության հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու դեպքում այդ մասին վստահորդին ողջամիտ ժամկետում չտեղեկացնելը հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս կանոնի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը իր գործունեության հասցեն կամ հեռախոսահամարը փոխել է, եթե այո

արդյո՞ք այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացրել է իր վստահորդին:

Դիմողը նշել է, որ 16.03.2015թ., 16.04.2015թ. և 03.07.2015թ. դատական նիստերին ընդհանրապես չի ներկայացել, իր վարքագծի հետ կապված չի տվել ոչ մի բացատրություն, անհետք փոխել է գրասենյակի տեղը: Այսինքն՝ այն ժամանակ, երբ ծառայությունների մատուցման պայմանագիրը փաստացի դադարել է: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից թույլ չի տրվել Կանոնագրքի 3.6.3 ենթակետի խախտում:

Փաստաբան Մանուշակ Հակոբյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում այն հանգամանքը, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանը նախկինում չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 23.10.2015 թվականի թիվ 333-Ա/ԿԳ-15172 որոշմամբ փաստաբան Մանուշակ Հակոբյանի (արտոնագիր թիվ 737) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.1.8, 3.5.5, 3.6.1, 3.6.3, 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Փաստաբան Մանուշակ Հակոբյանին (արտոնագիր թիվ 737) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 ենթակետի խախտման համար:

3. Փաստաբան Մանուշակ Հակոբյանի (արտոնագիր թիվ 737) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Մանուշակ Հակոբյանին և դիմող Սուլթան Դավթյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյան